

ԵՒՐՈՊԱՀԱՅ ԼՐԱՏՒՈՒԹԵԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻՆ ԿԱՐԻՔՆԵՐԸ

ՆԻՒԹՈՎ ԶՐՈՅՅ-ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ԼՈՏՏՈՆԻ ՄԷՋ

Երեքշաբթի, Յուլիս 16ին Լոնտոնի Սուրբ Սարգիս եկեղեցույ կիսալեզնեկան սրահին մէջ Մեծն Էրիտանիոյ եւ Իոլանտայի Հայոց Առաջնորդութեան կողմէ կազմակերպուած էր գրոցը հանդիպում մը «Նոր Յառաջ»ի տնօրէն՝ Ժիրայր Զուլաբեանի հետ, մասնակցութեամբ՝ Լոնտոնի համալսարանէն Դոկտ. Հրաչ Զիլինկիրեանի եւ ներկայութեամբ՝ Քեմակալ առաջնորդՎահան Եպիսկ. Յովհաննէսեանի: Հանդիպումին նիւթն էր՝ «Եւրոպահայութեան լրատուական պահանջները եւ հայկական մամուլին կարիքները»:

Հրաչ Զիլինկիրեան, որ միաժամանակ Սուրբ Սարգիս եկեղեցույ հիմնարկի ատենապետն է, երեկոյթի բացման խօսքին մէջ դասախօսական մօտեցումէն աւելի ընդգծեց գրոցին ձեւաչափը՝ աւելի աշխույժ քննարկում կատարելու համար:

Ժիրայր Զուլաբեան հակիրճ պատմականը կատարեց «Նոր Յառաջ»ի հիմնադրութեան եւ խորհրդածուլութեան երեք ուղիներ նշեց. առաջին՝ եւրոպահայ լրատուութեան ձեւաւորման անհրաժեշտութիւնը, երկրորդ՝ հայկական մամուլին դերը գերլուծեցած միջազգային լրատու գաղտին մէջ եւ երրորդ՝ ի՞նչ պէտք է ըլլան արդի հայկական լրատուութեան յատկանիշները:

Եւրոպահայ գաղութներու ժողովրդագրական քարտէսը զգալի կերպով փոխուած է Հայաստանի անկախութենէն ետք. անցեալին փոքր համայնքներ ունեցող արեւմտեան Եւրոպայի երկիրները, այսօր զգալի թիւ կը կազմեն եւ կարիքը ունին ինքնուրոյն լրատուութեան: Ֆրանսահայ գաղութը կը մնայ թիւով ստուարագոյնը: Ան գանազան ժամանակաշրջաններու ունեցած է հանրային, քաղաքական, գրական, մշակութային եւ այլ մասնագիտական մամուլ, քանի մը օրաթերթեր, որուն ամենէն երկարատեւը եղած է «Յառաջ»ը 1925-

էն 2009: Կանգ առաւ լոյս տեսնել 2009ին եւ որուն յաջորդեց «Նոր Յառաջ»ը:

ԵՒՐՈՊԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԸ ԱՍՏԵՂԾՄԱՆ ԱՆՀՐԱՎԺԵՏՏՈՒԹԻՒՆԸ

Եւրոպահայութեան համար էական խնդիր է, տեղեկատուական համակարգի մը ստեղծումը: Անհրաժեշտութիւն է համայնքի մը համար տեղեկատուական համակարգ ունենալը, սուեւալ համայնքի մը կազմաւորման ու գոյատեւման համար: Զկայ արդիական պետութիւն, չկայ արդիական համայնք, չկայ արդիական քաղաքացի, որ շունենայ տեղեկատուութեան կարիքը: Տեղեկատուական համակարգը համայնքի մը առանցքային կառուցներէն մէկն է: Արդիական պետութեան սահմանումին մէջ լրատուական համակարգը կը սեպուի իշխանութեան շրջանը սինը՝ օրէնսդիրի, գործադիրի եւ արդարադատականի կողքին:

Մանաւանդ Սփիւռք ունեցող հաւաքականութիւններու համար անընդհանր շնորհաբերութիւն է մամուլը եւ տեղեկատուական համակարգը, նկատի առնելով Սփիւռքահայութեան յարաշարժ ցրուածութեան ընթացքը զօրաւոր աշխարհայնացման հոսանքին մէջ: Որքան որ սփռումի կեդրոնախոյս ուժը կը զօրանայ, այնքան ալ հաղորդակցակապը, այսինքն՝ տեղեկատուական համակարգը իր բոլոր միջոցներով, կը դառնայ էական: Լրատուամիջոցը կը դառնայ համախմբումի ազդակ, սփռուած տառերը իրարու կապող միջոց:

Բնականաբար, ամէն կառույց իր անդամները, համակիրները տեղեկացնելու համար ներքին համակարգ մը կը զարգացնէ, սակայն անոր կողքին, անհրաժեշտ է աւելի ընդհանրական գանգուածային

լրատու միջոցի գոյութիւնը, որ գերիվեր է քաղաքական եւ ընկերային ուժերէ, որ լրատուութեամբ իր ամէնօրեայ կամ յաճախակի իր հրապարակումով մտային ու հոգեւոր կապ մը կը ստեղծէ հայութեան միջեւ, հայկական խնդիրներու կապակցութեամբ:

«Եւրոպական տեղեկատուական համակարգ» բնորոշումը կ'ենթադրէ գոյութիւնը լրատու միջոցի մը կամ լրատու միջոցներու, որոնք պէտք է նաեւ ներառեն անկլիտահայութեան համայնքային կեանքը, ինչպէս որ Ֆրանսահայութեան պարագային «Նոր Յառաջ»ի Ֆրանսերէն յաւելումը՝ «Hebdo», եւ, ն.։ ինչորը ընդհանուր առմամբ միայն Հայաստանի մասին տեղեկութիւն տալը չէ: Այդ տեղեկութիւնները կարելի է հայաստանեան կաթէջերու միջոցով ստանալ: Եւրոպահայ գանգուածային տեղեկատուական համակարգը հայաստանեան տեղեկատուական աղբիւրներու կողքին այլ օգտակար դեր ունի Եւրոպայի տեղական համայնքային կառույցներուն գործունէութեան մասին եւ համայնքի անդամները տեղեկացնելու առումով:

Հայերէնով տեղեկատուութիւնը, ինչպէս վերեւ նշեցինք՝ մտային եւ հոգեկան կապ է հայ հաւաքականութիւններու միջեւ: Զօրաւոր ազդակ է հաւաքական կեանքստեղծելու: Զօրաւոր ազդակ՝ հայերէն լեզուն կենսունակ պահելու: Իսկ իր խմբագրական մասնագիտական աշխատանք՝ հայութիւնը յուզող հարցերը այժմեականացնելու, հանրային կարծիք արթնուցնելու: Զօրաւոր գործը... նոյնքան արժէքատու է որքան դպրոց մը, որքան մշակութային կեդրոն մը, ունի համահայկական կարեւորութիւն, որովհետեւ իր ամէնօրեայ հաղորդակապով կը մասնակցի մշակութային միութիւններուն, դպրոցին, եկեղեցույ, պետութեան եւ համայնքային բոլոր հաստատութիւններու գործունէութեան անդրադարձին, ըլլալիքը՝ ծանուցելուն եւ եղածը՝ վերլուծելուն: Մտաւորական գաղտ մը, իրականութեան հայելին:

«Եւրոպական տեղեկատուական համակարգ»ը անհրաժեշտ կապ է նաեւ միջսփիւռքեան յարաբերութիւններուն եւ Հայաստանի հետ հաղորդակցական կամուրջ հաստատելուն: Այս առումով համահայկական նշանակութիւն ունի:

Եւ որպէսզի «Եւրոպական տեղեկատուական համակարգ»ը իր դրական դերակատարութիւնը ընէ, պէտք է, որ ան իր մէջ ներառնէ գանազան լրատու միջոցները՝ մամուլ, համացանց, ընկերային ցանցերու օգտագործում, հասանելի ըլլալու համար հայ համայնքի բոլոր խաւերուն՝ աւանդականէն մինչեւ գերարդիական լրատու միջոց օգտագործողը, երիտասարդէն մինչեւ տարեցը, հայերէն գիտցողն ու չգիտցողը, օպագիրէն մինչեւ արհեստագիտական նորագոյններ:

ըր՝ համացանցայինը, հեռաձայնայինը ...:

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻՆ ԴԵՐԸ ԳԵՐԹԱԳԵՑԱԾ ՄԻՋԱԶԳԱՑԻՆ ԼՐԱՏՈՒ ԴԱՏՏԻՆ ՄԷՋ

Միջազգային տեղեկատու գաղտը գերլուծեցած է: Շատերու համար կը ծագի այն հարցումը թէ ինչ նշանակութիւն ունի հայկական լրատու միջոցի գոյութիւնը, երբ ամէն ինչի մասին կարելի է այսօր համացանցով տեղեկակ ըլլալ: Որքան որ ալ փոքրածաւալ ըլլայ հայկական տեղեկատուական մարմիններու լրատու գաղտը եւ միջոցները, ինչ որ հայկական լրատու միջոցները կ'արժարծեն միջազգային եւ այլ տեղական գործակալութիւնները չի հետաքրքրէ: Հայութիւնը հետաքրքրող էական լրատուութիւնը միայն հայկական լրատու միջոցները կրնան հազարդել:

ԻՆՉ ՊԵՏՔ Է ԸԼԱՅ ԱՐԴԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԼՐԱՏՈՒԹԵԱՆ ՑԱՏԿԱՆԻՇԸ

Եւրոպահայ լրատուութեան կարեւոր յատկանիշը պէտք է ըլլայ ազատութեան գաղափարը: Հայութիւնը իր ցրուած վիճակով կ'ապրի ցամաքամասերու վրայ, երկիրներ մէջ ուր խօսքի ազատութիւնը սահմանափակուած է: Զանազան տեսակի արգելքներ կան դրուած պետական, կուսակցական, տնտեսական: Եւրոպահայութիւնը կը վայելէ խօսքի եւ մտածումի ազատութիւնը իր բնական երկիրներու մէջ: Իր պարտքն է ազատութեան գաղափարականով շարժիլը, որուն համար անհրաժեշտ է տնտեսական անկախութիւնը եւ մտաւորականութեան ներգրաւուելը, գաղափարական փոխանակումի, վերլուծումի եւ հարցերուն քննադատական իրաւունքը ապահովելու համար:

Զրոյցի ընթացքին բնականաբար խօսք յառաջացաւ արդիական նորագոյն գիտահարաք սարքերու եւ համացանցային տեղեկատուական միջոցներու գործածութեան անհրաժեշտութեան մասին՝ բաղադատած տպագիր մամուլի: Ժիշը էր դիտողութիւնը. անհրաժեշտ է արդիական տեղեկատուագիտութեան գործածութիւնը հայ լրատու միջոցներու կողմէ, սակայն ամէն ինչ իր գինն ունի: Ամէն ինչ նախ եւ առաջ գիտակցութեան հարց է: Պէտք է գիտակցիլ տեղեկատուական համակարգի անհրաժեշտութեան իր համայնքի մը գոյատեւման յենասին, հաղորդակցակապ: Եւ անկէ ետք պէտք է միջոցները տրամադրել՝ մտաւորական, թէքնիք եւ դրամական, արհեստավարժ անձերով համայնքային լրատու միջոց կամ միջոցներ ստեղծելու եւ պահպանելու համար:

Ք. Շ.

թէ այն թերթերը, որոնք քննադատաբար անդրադարձած են Թիֆլիսի գիտաժողովին, արդեօք նոյն քննադատական մօտեցումը ցուցաբերած են 23 տարի առաջ՝ Մարաշլիանի մասնակցութեան առիթով: Արդեօք օրինականացումի խնդիր չկա՞ր այն ատեն: Իսկ եթէ կար, արդեօք կարելի՞ էր կանխել, որ 23 տարի ետք նոյն կոտորած տաշտակին առջեւ գտնուէինք:

Երկրներանքներու ներկայութիւնը կը փաստէ մէկ բան. միակողմանի պատասխանները բաւարար չեն:

(****) Տե՛ս. gcc.glendale.edu/marashlian/Webs/lectureinAnkara1990.htm.

(Շար. 3 եւ 4երջ)

Վ.Մ. Նու Շրդի

Անվերջանալի հարցումներու եւ armeniac-hayagank.blogspot.com